Պահանջվող փաստաթղթեր

Մինչ վարկավորումը

- Հիմնադիրների, տնօրենի և գլխավոր հաշվապահի անձը հաստատող փաստաթղթեր,
- Հարկային տեսչությունից տեղեկանք պարտավորությունների մասին,
- Էլեկտրոնային եղանակով Հարկային տեսչություն ներկայացված վերջին 1 տարվա հաշվետվությունները և հաշվետվություններն ընդունված լինելու վերաբերյալ ծանուցում,
- Իրավաբանական անձի կանոնադրության պատճեն,[1]
- Իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի վկայականի պատճեն (իր ներդիրներով) և ՀՎՀՀ-ի պատճեն (իրավաբանական անձանց դեպքում պահանջվում է ըստ անհրաժեշտության),[1]
- Տեղեկանք իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրից,[1,2,3]
- Քաղվածք ռեեստրից՝ բաժնետիրական ընկերության դեպքում,[3]
- Գրավ(ներ)ի սեփականության վկայական, տեխնիկական անձնագիր, սեփականատերերի անձը հաստատող փաստաթղթեր, ամուսնության վկայական և գրավների լուսանկարներ,
- Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ,
- Անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել նաև այլ փաստաթղթեր:
- Դիմում-հայտ՝ տոհմային ԽԵԿ-ի ձեռքբերման և ձեռք բերվող կենդանիների քանակի վերաբերյալ, ձեռքբերման վայրը, ներմուծման դեպքում՝ ներկրման ժամկետները,
- Նախարարության կողմից տրամադրված համապատասխանելիության եզրակացություն,
- Գրավոր պարտավորագիր՝ ձեռք բերվող տոհմային ԽԵԿ-ը առնվազն երեք տարի ՀՀ-ում տավարի նախրի վերարտադրության համար օգտագործումն ապահովելու վերաբերյալ:

Տոհմային ԽԵԿ ձեռքբերելուց (ներկրելուց) հետո

- Ձեռքբերման պայմանագրի պատճենը,
- Ձեռք բերված կենդանիների տոհմային քարտերը,
- Կենդանիների համար վճարման անդորրագրերը, հաշվարկային փաստաթուղթը, հաշվարկային փաստաթուղթ չհամարվող այլ փաստաթղթեր,
- Փոխադրող ընկերության հետ պայմանագրի պատճենը (առկայության դեպքում),
- Կենդանիների առողջական վիճակը հավաստող անասնաբուժական վկայականը (ներկրման դեպքում՝ անասնաբուժական ուղեկցող փաստաթղթերի պատճենը),
- Համայնքում կենդանիների հաշվառման տեղեկանքը:

1 Փաստաթղթերը պահանջվում են, եթե ՀՀ ԱՆ պետական ռեգիստրի տվյալների շտեմարանում տվյալները կամ փաստաթղթերը բացակայում են կամ սխալ են:
2 Տեղեկանքը կարելի է ստանալ Բանկից կամ ՀՀ ԱՆ պետական ռեգիստրի գործակալությունից, ընդ որում՝ իրավաբանական անձ հաճախորդների կողմից տեղեկանքի ներկայացումը պարտադիր է, իսկ անհատ ձեռնարկատեր հաճախորդների կողմից պարտադիր է իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի վկայականը իր ներդիրներով չներկայացնելու դեպքում:
3 Կարող է ներկայացվել Բանկի կողմից վարկը տրամադրելու վերաբերյալ դրական որոշում կայացնելուց հետո: